ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Արուճի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է ուսուցչի թափուր աշխատատեղերի մրցույթ՝ «Մաթեմատիկա» (19 դասաժամ), «Բնագիտություն» (2 դասաժամ), «Ֆիզիկա» (3 դասաժամ), «Կերպարվեստ» (10 դասաժամ), «Բնություն» (6 դասաժամ) առարկաներից:

Մրցույթներն անցկացվում են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը ,և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 ձափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում):
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,
10. հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները՝ վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի սեփպտեմբերի 11-ից մինչև սեպտեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի սեպտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին, Արուճի միջնակարգ դպրոցում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, Արուճ բնակավայր, 3-րդ փողոց, դպրոց՝ 1):

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝

098-70-11-99: